

ԿԱՐԺԻՔՆԵՐ ԵՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ.

Յ. Բ. Ռ. ՄԻՌԻԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ազգի մը անմահութեան գրաւականն է բարեգործութեան ոգին, որուն իրական, գործնական ու կենդանի պատկերն է Հայ-կական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Միքելի ժողովուրդ Հայոց, զիտցիր որ Բարեգործականը ֆեզի համար հաստատուած է, ֆեզմով միայն կրնայ հաստատուն մնալ եւ ծառայել ֆեզի: Կատարէ պարտք, պահանջէ իրաւութիւն:

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՑ

Համոգուած եմ սակայն, որ երէ մեր Ազգին մէջ միակ ձեռ-նարկ մը կա, որ խոհեմութեամբ մտածուած, իմաստութեամբ կազմակերպուած եւ ուղամտութեամբ գործադրուած ըլլայ, այն ալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն է:

ՊՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՈ. ՕՐՄԱՆԵԱՆ

Օրինեալ ըլլան ամէն անոնք որ մեր արիւնուայ պատարա-գին թանկագին նշխարները կը պահպանն նախառազրական կո-րուստէ մը, մողցմելով անոնց՝ իրենց վերքերու. կսկիծն ու տա-ռապանի դառնութիւնը, ու պատրաստելով զիրենք վաղուան վե-րածնութեան մեծ զոհագործումին:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ

Բարեգործականը պիտի մնայ եւ պիտի տիրէ. ցորքան այս ազգը ցաւ մը ունի իր սրտին խորը եւ յոյս մը իր հոգիին մէջ: Բա-րեգործականը մեր մէջ այն կազմակերպութիւնն է, ուր միշտ ա-ւելի գործ եղած է քան խօսք:

ԹՈՐԴՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆ

Սեմին վրայ վախճանին, որուն մերձեցումը կը զգամ ամէն օր, կը մխիթարուիմ արդարեւ գիտնալով թէ կատարուած գործը ունայն չէ եւ թէ իմ յաջորդներուս կողմէ եռամդրով յառաջ պիտի տարուի:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հաւատարիմ իր աւանդութեանց, պիտի շարունակէ Հայ ժողովուրդին եւ հայրենիքին մատուցանել այն ծառայութիւնները, գոր իր գերազանցապէս հայրենասիրական նպատակը գծած է իրեն:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Ամէն Հայեր, որ սփոռուած են աշխարհի ամէն կողմ, պէտք է գուրգուրանենով նային դէպի մեր Ընկերութիւնը, իր կենանի հայկական շէնքի մը, որ իրենուանենով կը հետապնդէ Հայ ժողովուրդին երջանիկութիւնը եւ բարգաւանումը: Պէտք է գիտնան որ այս Ընկերութիւնը Հայ օնախն է, միշտ պատրաստ օգնելու ամէն Հայերու որ ցաւեր ունին, սրբելու անոնց արցուները եւ աշխատելու անոնց բարոյական եւ նիւթական բարօրութեան:

ԳԱԼՈՒՍ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր բոլոր շարքերովը, գիտակիրներ Հայ Բարեգործական բանակին. ահա եղբայրական օգնութեան եւ հայրենիքի վերաշինութեան նուիրական գործին կը լծուի, անվերապահ եւ անձնազն նուիրումով, բանզի պարտականութեան եւ զրոյութեան վնական ժամը արդէն հնչած է ամէն սրտցա Հայու համար, բայց մանաւանդ մեր սիրելի Միութեան ամէն մէկ ուխտադիր անդամին համար:

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ

Բայց մեր բովանդակ ջանքերը սեւեռած ենք ուրիշ կարօտութեան մը բարձունքին, նորական սերունդի դաստիարակութեան գործին, երբեք ուշադրութենէ չվրիպեցնելով թէ իր տոհմիկ տարբերքով ու ներշնչած ցեղային կենցնութեան զօրաւոր ոգիսվ է որ այդ դւասուհարակութիւնը կրնայ իսկապէս արժեւորվի: Մենք միայն կեանքի ասպարէզին համար լայ զինուած երիտասարդներ չէ որ կ'ուզենք պատրաստել, այլ Հայ' եւ իրեն Հայութեամբ հպա՞րտ երիտասարդներ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունին մեծարանքը եւ անոր գործին զնահատանքը բացայաց իրականութիւն մըն մըն է այսօր ամբողջ ազգին մէջ:

ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ